COVID.

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԿԲԱՑՎԵՆ»

Հունիսի 30-ին, երկրի կառավարության հերթական նիստում, վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ Վրաստանի կառավարությունը հնարավոր ամեն ինչ կանի, որպեսզի առաջին իսկ հնարավորության դեպքում, թեեւ զգուշորեն, բացի սահմանները:

Մեկնաբանելով, որ Վրաստանը կանոնավոր քաղաքացիական ավիաչվերթերի վերականգնումը հետաձգել է հուլիսից-օգոստոս, վարչապետը նշեց նաեւ, որ Վրաստանի եւ ԵՄ երկրների միջեւ չարտերային ավիաչվերթերը մինչ օրս իրականացվում են:

Ըստ նրա՝ կառավարության նման մոտեցման պատճառը «մեր քաղաքացիների առողջությունն» է: Դրա հետ մեկտեղ, Գիորգի Գախարիան նշեց, որ որոշ հեռուստաընկերություններ «շահարկումներ են տարածում» այն մասին, թե ինչու է հետաձգվել կանոնավոր ավիաչվերթերի մեկնարկը:

Կառավարության ղեկավարը հորդորեց չմոռանալ, որ տարածաշրջանի շատ երկրներում լուրջ համաճարակաբանական բռնկում է նկատվում: Մինչդեռ, ոչինչ չի սպառնում Վրաստանի հարաբերություններին ԵՄ-ի հետ տրանսպորտի առումով, ասաց վարչապետը:

- Միլիոներորդ անգամ կկրկնեմ, որ մեր կատարած յուրաքանչյուր քայլ, առաջին հերթին, պայմանավորված է մարդու առողջությամբ եւ մեր ձեռքբերումներով: Երբ, ի տարբերություն տարածաշրջանի այլ երկրների, նոր վարակների թիվը մեզ մոտ միանիշ թվերով է որոշվում, իսկ այլ երկրներում ամեն օր հարյուրավոր մարդիկ են վարակվում: Մենք պետք է դա հաշվի առնենք: Մենք պետք է իմանանք, որ այդ հնարավորությունը մեզ տալիս է մեր քաղաքացիների ճիշտ պահվածքը, ինչպես նաեւ՝ սահմանների եւ կարանտինի մեխանիզմների արդյունավետ վերահսկողությունը,- ընդգծեց Գիորգի Գախարիան:

Չնայած՝ մինչեւ օգոստոս կանոնավոր չվերթերի հետաձգման որոշման, կառավարությունը հուլիսի 1-ից բացեց հատուկ չվերթերի օդային տարածքը:

ՈՒԺԻ ՄԵՋ է ՎՐԱՍՏԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՇՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՐԿՇԱԲԱԹՅԱ ԿԱՐԱՆՏԻՆԸ

ՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ է

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, Վրաստանում վերահսկվում է համավարակաբանական իրավիճակը:

- Երկրում համավարակաբանական վիճակը լիովին վերահսկվում է: Այսօրվա դրությամբ, ապաքինվել է վարակվածների 86 տոկոսը, ինչը շատ լավ ցուցանիշ է,- ասաց Ամիրան Գամղրելիձեն:

Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավարն անդրադարձավ նաեւ սահմանների բացման թեմային՝ նշելով, որ Վրաստանում երկշաբաթյա կարանտինի ռեժիմը մնում է ուժի մեջ:

Նրա խոսքով, երկիր մուտք գործող բոլոր քաղաքացիները պարտադիր պետք է անցնեն 14-օրյա կարանտին, սակայն կարող են լինել բացառություններ, եւ անձը անցնի ինքնամեկուսացման ռեժիմի:

- Վրաստանում դեռեւս պահպանվում է կարանտինի ռեժիմը: Երկշաբաթյա կարանտին են անցնելու բոլոր այն անձինք, ովքեր մուտք են գործում երկիր: Հնարավոր է գործեն նաեւ բացառություններ, եւ որոշ անձինք այդ ժամանակաշրջանն անցնեն ինքնամեկուսացման մեջ,- նշեց Ամիրան Գամղրելիձեն:

ԳԼՈԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ. 11 ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, 6 ՄԻԼԻՈՆ 162 ՀԱԶԱՐԻՑ ԱՎԵԼԻ ԱՊԱՔԻՆՎԱԾ

Աշխարհում նոր տիպի կորոնավիրուսային վարակի՝ COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 11 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 524 հազարը: Ապաքինվել է ավելի քան 6 միլիոն 162 հազարից ավելի մարդ:



Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող **ԱՄՆ-ում 2 837 189** հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **131 485** է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Ընդհանուր ցուցանիշով երկրորդ տեղում հայտնված **Բրազիլիայում** հաստատված դեպքերի թիվը հասել է **1 501 353**-ի, մահացածներինը՝ **61 990-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Ռուսաստանն** է, որտեղ, ընդհանուր առմամբ, կորոնավիրուսով վարակվել է **667 883** մարդ: Երկրում վարակի հետեւանքով մահացել է **9 859** մարդ:

Վարակվածների թվով հաջորդում են Հնդկաստանը, Իսպանիան, Պերուն, Չիլին, Մեծ Բրիտանիան, Իտալիան եւ Մեքսիկան:

Համաճարակի սկզբնաղբյուր Չինաստանում վարակվածների թիվը կազմում է 83 542, մահացածներինը՝ 4 634:

ՄԵԿ ԱՄՍՈՎ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ է ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Օտարերկրացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց Վրաստանում օրինական մնալու ժամկետները երկարացվել են եւս մեկ ամսով: Համապատասխան փոփոխությունները կատարվել են Վրաստանի կառավարության 2020 թվականի հունվարի 28-ի որոշման մեջ:

Դրույթները վերաբերում են այն անձանց, ովքեր օրինական ձեւով գտնվում էին Վրաստանում 2020 թվականի մարտի 14-ից: Այն դեպքում, եթե մինչեւ այժմ նրանք չեն կարողացել լքել երկիրը մի շարք պատճառներով, նրանց գտնվելու ժամկետը կերկարաձգվի մինչեւ 2020 թվականի հուլիսի 31-ը:

Նման պատճառներ են դեպքերը, երբ

* այն պետությունը, որի քաղաքացին գտնվում է բարձր ռիսկային գոտում,
* եթե սահմանի հատումը սահմանափակված է համապատասխան պետության կողմից,
* եթե առողջական պատճառներով անձը գտնվում է հիվանդանոցում, կարանտինում կամ ինքնամեկուսացման մեջ,
* եթե անձը չի կարող ժամանակին լքել երկիրը ավիաչվերթերի չեղարկման պատճառով:

Վրաստանի օրենսդրությամբ սահմանված դրույթները չեն վերաբերի այն անձանց, եթե նրանք փաստաթղթեր տրամադրեն, որոնք հաստատում են, թե ինչու են նրանք ստիպված մնալ երկրում:

Միեւնույն ժամանակ, կառավարության որոշման մեջ նշվում է, որ այդ անձանց մնալը Վրաստանում չի կարող հիմք հանդիսանալ բնակության թույլտվություն ստանալու համար:

Հիշեցնենք, որ մարտի 21-ին, կորոնավիրուսի տարածման պատճառով մեկ ամիս արտակարգ դրություն էր հայտարարվել ողջ Վրաստանում: Երկիրն ամբողջությամբ դադարեցրել էր օդային հաղորդակցությունը եւ փակել իր սահմանները օտարերկրացիների համար:

Վրաստանում արտակարգ դրության պայմանակարգը չեղարկվեց մայիսի 23-ին, սակայն երկրի սահմանները դեռեւս փակ էին, իսկ կանոնավոր միջազգային ավիաչվերթերի վերսկսումը հետաձգվել է մինչեւ հուլիսի վերջ:

Հուլիսի 1-ից ակնկալվում է, որ, Վրաստան մուտք գործելու դեպքում, դյուրացված կանոնակարգեր կկիրառվեն օտարերկրյա քաղաքացիների որոշակի կատեգորիաների, օրինակ՝ գործարարների եւ ուսանողների համար:

ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Ինչպես Վրաստանում, այնպես էլ՝ հարեւան Հայաստանում եւ Ադրբեջանում ամեն օր ավելանում է վարակման դեպքերի թիվը: Ինչպես վկայում է «worldometers» վիճակագրությունը, վարակվածների թվով տարածաշրջանում առաջինը Հայաստանն է: Այստեղ հուլիսի 3-ին գրանցվել է 662 նոր դեպք, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասել է 27 320-ի, որից 15 484-ն առողջացել է: Մահացածների թիվը կազմում է 469:

Վարակվածների թվով տարածաշրջանում երկրորդը Ադրբեջանն է: Այստեղ, հրապարակված վիճակագրության համաձայն, հուլիսի 3-ին վարակվածների թիվը կազմել է 572 մարդ: Ընդհանուր առմամբ, Ադրբեջանում կորոնավիրուսի վարակ է հայտնաբերվել 18 684 մարդու մոտ: Վարակից մահացել է 228, ապաքինվել՝ 10 425 մարդ:

Հատկանշական է, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում կորոնավիրուսի տարածման պահից վիճակագրությամբ ամենացածր ցուցանիշները գրանցվել են Վրաստանում: Հուլիսի 3-ին վարակ է հայտնաբերվել 4 քաղաքացու մոտ, վարակվածների ընդհանուր թիվը հասել է 943-ի, վարակի բռնկումից ի վեր այստեղ ապաքինվել է 821, մահացել՝ 15 մարդ:

ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԶԳՈՒՅՇ ԼԻՆԵԼ, ԿՐԵԼ ԴԻՄԱԿՆԵՐ, ՀԱՃԱԽԱԿԻ ԼՎԱՆԱԼ ՁԵՌՔԵՐԸ...

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանի բժշկական գիտությունների դոկտոր, վարակիչ հիվանդությունների բաժնի վարիչ Ֆախիմ Յունուսի խորհուրդները:

1. Մենք COVID-19-ի հետ երկար ենք ապրելու: Եկեք դա չհերքենք եւ խուճապի չմատնվենք: Եկեք է՛լ ավելի չբարդացնենք մեր կյանքը: Եկեք սովորենք լինել երջանիկ եւ ապրել սույն փաստի հաշվառմամբ:

2. Դուք չեք կարող ոչնչացնել COVID-19-ի վիրուսը, որոնք թափանցում են բջիջների մեջ, կլանում են մեծ քանակությամբ ջուր, դուք հաճախ զուգարան եք գնում:

3. Ձեռքերը լվանալը եւ 1,8 մետր հեռավորության պահպանումը վիրուսից պաշտպանվելու լավագույն միջոցն է: Եթե դուք COVID-19-ով հիվանդ չունեք, ապա պարտադիր չէ տունը ախտահանել:

4. Ուղեբեռի փաթեթավորումները, գազի պոմպերը, սահնակներն ու բանկոմատները վարակը չեն տարածում: Լվացեք ձեռքերը եւ ապրեք սովորականի նման:

5. COVID-19-ը սննդային վարակ չէ, այն կապված է կաթիլային վարակման հետ՝ ինչպես գրիպը: Սնվելու ժամանակ COVID-19-ի վարակման փաստացի դեպք չի եղել:

6. Սաունա մուտք գործելը չի սպանում COVID-19-ի վիրուսը, որը ներթափանցում է բջջի մեջ:

7. Դուք կարող եք հոտառությունը կորցնել՝ ալերգիայի տարբեր ձեւերի եւ վիրուսով վարակվելու դեպքում: Դա COVID-19-ի համար յուրահատուկ ախտանիշ չէ:

8. COVID-19-ի վիրուսը օդում չի կախվում: Դա կաթիլային վարակ է, որը պահանջում է մարմնական շփում: Օդը մաքուր է, ինչը թույլ է տալիս զբոսնել այգիներում, զբոսայգիներում (պահպանելով հեռավորություն):

9. COVID-19-ի դեմ բավական է օգտագործել սովորական օճառ, հակավիրուսային օճառի օգտագործումը պարտադիր չէ: Բոլոր դեպքերում վիրուսը մանրէ է:

10. Կոշիկներով COVID-19-ի ներկրումը բնակարան եւ դրանով հիվանդանալը՝ միեւնույն է, ինչ եթե մեկ օրում կայծակը հարվածի երկու անգամ: Ես քսան տարի է աշխատում եմ այդ ուղղությամբ եւ համոզված եմ, որ կաթիլային վարակը այդ մեթոդով չի տարածվում:

11. Ձեռնոցներ կրելը հաջող գաղափար չէ: Վիրուսը կարող է կուտակվել ձեռնոցի վրա եւ դյուրին կերպով անցնել դեմքին հպվելիս: Գերադասելի է լվանալ ձեռքերը:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԱՆԵԿԴՈՏ

Ամերիկյան ռեստորանում հաճախորդը դիմում է մատուցողին.

- Ձեր խորոված ը վատ է պատրաստված, ընդհանրապես ծամել հնարավոր չէ:

- Բայց դուք ձեր դիմակը չեք հանել:

ՀԻՇԵՔ ԱՅՍ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾ ԱՐՎԵՍՏԻ ՃԱՄՓԱՆ ՍԿՍՎՈՒՄ Է ԴՊՐՈՑԻՑ

Տասնյակ տարիներ շարունակ «Վրաստան» թերթի «Հիշեք այս անունները» խորագիրը էջեր է տրամադրել արտառոց ունակությամբ օժտված տաղանդավոր մանուկներին ու դեռահասներին, որոնցից շատերը հետագայում դարձել են ճակատագրով իրենց շնորհված բնագավառի արժանի ներկայացուցիչներ: Մեզ ու նաեւ արտերկրին այսօր քաջածանոթ դաշնակահար Մամիկոն Նահապետովը, գրող Անրի Գրիգորյանը, երգիչ էրիկ Կարապետյանը, բանաստեղծ Ռուզաննա Հովասափյանը..., ի դեպ, բոլորն էլ ծնունդով թբիլիսցիներ, կյանքի ուղեգիր ստացել են «Հիշեք այս անունները» խորագրից:

Շարունակելով ավանդույթը՝ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցի պատանի գեղանկարիչներ Մանանա Հարությունյանին (7-րդ դասարան) եւ Գարրի Առուշանյանին (11-րդ դասարան):

Մանանան եւ Գարրին արդեն զգացել են իրենց առաջնեկ ցուցահանդեսի ուրախությունը, որ բացվել է հենց դպրոցում: Տարբեր տարիքի եւ կյանքից տարբեր սպասումներ ունեցող այս աղջիկն ու տղան ունեն մի ընդհանուր համոզմունք՝ նրանց համար նկարչությունը հենց ա'յն է, ինչով ուզում են զբաղվել ողջ կյանքում: Այդ մասին ահա թե ինչ պատմեցին Մանանան եւ Գարրին մեր թղթակցին.

- Հաճախ ես ինքս ինձ հարց եմ տալիս, թե ինչո՞ւ եմ նկարչությունը գերադասում ձեռքի գնդակ խաղից կամ գեղարվեստական գրականություն ընթերցելուց, որ իմ սիրած զբաղմունքներն են եւ, անկեղծ ասած, չեմ գտնում հարցիս լիարժեք պատասխանը: Գիտեմ միայն, որ նկարչությունն ինձ շա՜տ է հարազատ, կարծես մենք լինենք միեւնույն մարդիկ, կարծես նկարչությունն իմ երկրորդ «ես»-ը լինի, ում ես շատ եմ վստահում: Այդ վստահությունից են ծնվել դպրոցում ցուցադրված իմ նկարները՝ վրացական, հայկական ու այլ ժողովուրդների հեքիաթների հերոսներ Մյուն Հաուզենը, Կոմբլեն, Նացարքեքիան, Ծիքարան, Անահիտը...

Մանանա Հարությունյան

Ուզում եմ խոստովանել, որ ազնիվ, բարի, ընկերասեր այդ հերոսներն իրենց օրինակով ինձ օգնում են շրջապատում տեսնել հեքիաթների այդ հերոսների նման բարի ու նվիրված մարդիկ:

Օգտվելով թերթում տպագրվելու առիթից՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհուս՝ սիրելի Լիա Նացվլիշվիլուն, ում մտահղացմամբ էլ դպրոցում բացվեց իմ նկարների ցուցահանդեսը: Մինչ այդ, ինձ համար կարեւոր չէր, թե նկարներս ինչ տպավորություն կթողնեն դիտողի վրա, իսկ հիմա երազում եմ, որ մարդիկ դիտեն, հավանեն եւ ուզենան միշտ նայել իմ նկարները:

Շատերի նման ես էլ ունեմ նվիրական երազանք. երազում եմ հայտնի նկարիչ ու քանդակագործ դառնալ եւ անչափ շնորհակալ եմ նկարչության ուսուցչուհուս՝ Թբիլիսիի «Երիտասարդական պալատի» կերպարվեստի խմբի ղեկավար Թինաթին Կոցաշվիլուն, ով միշտ ասում է, որ լավ նկարիչ լինելու համար պետք է հասկանալ գույների լեզուն...

Ամենից շատ սիրում եմ նկարել նատյուրմորտներ ու բնանկարներ եւ այնպե՜ս կուզենայի, որ իմ բնանկարն էլ մարդու հոգին նույնչափ խաղաղեցնող լինի, որչափ ինքը բնությունն է...

Դպրոցում իմ ու Գարրիի ցուցահանդեսները իրար կողք են ներկայացված, եւ ես հաճախ նայում եմ նրա «Դիմանկարների շարքին» ու ինձ շատ է դուր գալիս նրանց հումորը, ինչը, իմ կարծիքով, այդ դեմքերը ավելի բարի է դարձնում:

Մի գաղտնիք խոստովանեմ. երբ ես երազում եմ որեւէ բանի մասին, նկարում եմ այդ երազանքը, ու նա իրականանում է: Այդպես իրականացավ շուն ունենալու երազանքս. մի գեղեցիկ օր ունեցա հենց այն շունը, որ հաճախ նկարում էի...

...Թե ինչու եմ սիրում նկարել, գուցե չկարողանամ բացատրել, բայց հաստատ հավատում եմ, որ երազանքները կարելի է նկարել, եւ նկարչությունը ինձ կօգնի հասնել իմ բոլոր երազանքներին:

- Երբ մեր դպրոցի սիրելի ու հարգարժան տնօրենը՝ Իրինա Ժամկոչյանը, ասաց, որ նկարներս ցուցադրվելու են դպրոցում, անկեղծ ասած, չպատկերացրեցի դա, որովհետեւ միշտ մտածել եմ, որ ցուցահանդեսը միայն մեծ ու շատ հայտնի նկարիչների համար է: Ու հիմա, երբ իմ նկարները դիտում են, ինձ շատ պատասխանատու եմ զգում...

Գարրի Առուշանյան

Ուզում եմ անկեղծ խոստովանել, որ մինչեւ օրս նկարած իմ նկարներից ոչ մեկը չեմ հավանում, ուղղակի երազում եմ լա՜վ նկարել... Այնպես նկարել, որ ոչ մի նկարչի նման չլինեմ. չգիտեմ՝ լավ է դա, թե վատ, բայց չեմ սիրում նմանվել:

Ինձ հաճախ հարցնում են, թե ով է սիրածս նկարիչը, ու ես անկեղծ պատասխանում եմ, որ խուսափում եմ նկարիչների կյանքի ու գործերի մեջ խորանալ, որովհետեւ, ասում են, որ մեծ նկարիչների կյանքը վատ է ավարտվել... Կարծում եմ, որ տարիքիս հետ ես կհաղթահարեմ այդ զգացումը: Հարցնում են նաեւ, թե սիրո՞ւմ եմ գիրք կարդալ: Անկեղծ չի լինի, եթե ասեմ, որ շատ եմ սիրում գիրք կարդալ, իրականում նախասիրությունը տալիս եմ ընկերներիս հետ ֆուտբոլ կամ նարդի խաղալուն: Ի դեպ, ունեմ, այսպես ասած, ինտերնացիոնալ շրջապատ՝ հայ, վրացի, ռուս, ուկրաինացի, եզդի, ադրբեջանցի ընկերներ: Աղջիկ-ընկերների հարցում մի-փոքր նախանձախնդիր եմ. ինձ դուր են գալիս՝ իրենց չերեւակայող, համեստ ու խելացի աղջիկներ...

Հիմա, կորոնավիրուսի համավարակի պատճառով, ինքնամեկուսացման մեջ լինելը, անկեղծ ասած, ինձ օգնեց ավելի լուրջ նայել կյանքին. մինչ վերջերս, մի բան անելիս, չէի մտածում հետոի մասին, հիմա՝ նախ մտածում եմ, թե դրանով ինչի կհասնեմ ու անելիքս ինչ հետեւանք կունենա... Բայց նույնը չեմ կարող ասել նկարելու պրոցեսի մասին: Երբ սկսում եմ նկարել, նկարը նախապես չեմ պատկերացնում, այն ստեղծվում է ընթացքի մեջ: Բոլոր նկարներում աշխատում եմ անկեղծորեն թղթին հանձնել զգացմունքներս, ուզում եմ, որ ներկայացված դիմանկարը պատմի այդ մարդու մասին, թե ինչ բնավորություն ունի, ինչ է նա զգում այդ պահին: Ամենից շատ սիրում եմ բնություն նկարել, որովհետեւ նա մոռացնել է տալիս վատը, բնության հետ հոգիդ խաղաղվում ու հույսերով է լցվում: Սիրում եմ անկեղծությունը, դա ինձ նկարելն է սովորեցրել...

Շնորհակալություն քեզ, սիրելի «Վրաստան» թերթ, որ գրեցիր իմ մասին, ինձ անկեղծանալու հնարավորություն տվեցիր եւ ընթերցողները ծանոթացան ինձ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Արարողությանը հաջորդեց թեմի հովանու ներքո գործող «Սուրբ Գրիգոր Նարեկացի» եւ «Սուրբ Եղիա մարգարե» հայերենի կիրակնօրյա ուսուցման սաներին՝ շնորհակալագրերի, իսկ Սուրբ Մովսես Խորենացու անվան նախակրթարանի 23 շրջանավարտներին՝ ավարտական վկայական հանձնելու բացօթյա միջոցառումը: Ու թեեւ համավարակով պայմանավորված, ձեւաչափն առաջին անգամ էր կիրառվում իննամյա նախակրթարանում, այն մեծ ոգեւորություն էր առաջացրել մեծերի շիրիմներին ծաղկեփնջեր խոնարհող փոքրիկների շրջանում, որոնք սրբավայր դարձած Պանթեոնում իրենց օրհնությունն էին ստանում՝ դեպի դպրոց ճանապարհին: Մեկնարկը ոչ միայն ուսանելի, այլեւ խորհրդանշական էր, քանի որ նախակրթարանի 2019/2020 շրջանավարտների գերակշիռ մասը եւ այս անգամ 15-ը, միջնակարգ կրթությունը շարունակելու է մայրաքաղաքի հայկական թիվ 104 եւ թիվ 103 դպրոցներում:

Կիրակոս վարդապետի օրհնության ու «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի, Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի, «Հայարտուն» կենտրոնի եւ թեմի կրթության բաժնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանի շնորհավորանքի խոսքերն ուղղված էին բոլոր սաներին՝ լինել ճանաչ մեսրոպատառին, լինել բարեկամ այլ ժողովուրդներին եւ ապրել այնպես, ինչպես պատգամել են մեր մեծերը՝ հավատարիմ մնալով ազգին, եկեղեցուն ու պետությանը:

Հիշեցնենք, որ տարվա ընթացքում Հայոց եկեղեցին Սբ. Մեսրոպ Մաշտոցի եւ Սբ. Սահակ Պարթեւի հիշատակը տոնում է երկու անգամ՝ ամռանը եւ աշնանը: Հայ իրականության մեջ թարգմանչաց շարժման սկիզբը դրվել է 5-րդ դարում՝ Հայոց գրերի գյուտով: Սբ. Մեսրոպի եւ Սբ. Սահակի առաջնորդությամբ, նրանց աշակերտներն առաջինն էին, որ հայերեն թարգմանեցին Աստվածաշունչ Սուրբ Գիրքը:

ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՆՈՐՈՒՅԹ

ՏԲՀ-Ն ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՄԵԿ ԼԱՐԻԻ ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐԸ

Վրաստանի ողջ տարածքում ՏԲՀ-ի բանկի՝ արագ վճարումների սարքերով ցանկացած հաշվի (ֆիզիկական անձ) վրա գումարի փոխանցման կոմիսիոն վճարը լրիվությամբ չեղարկվում է:

Սույն որոշումն ընկերությունն ընդունել է բանկի սպասարկումներից օգտվողների գործառույթների դյուրացման նպատակով:

Նորույթը վերաբերում է ՏԲՀ-ի բոլոր մասնաճյուղերում, ինչպես նաեւ փողոցներում տեղակայված ՏԲՀ-ի արագ վճարման տերմինալներին: Մինչ այդ, փողոցներում տեղակայված սարքերից օգտվելու ժամանակ, հաշվեհամարի վրա գումար փոխանցելիս՝ մեկ լարին անցնում էր ՏԲՀ-ի հաշվի վրա:

- ՏԲՀ-ն սպառողների սպասարկմանը կողմնորոշված ընկերություն է: Մեր ռազմավարությունն են թվային այնպիսի ծառայությունների եւ արտադրանքի հիմնումը, որոնք կդյուրացնեն բանկի եւ սպառողների հարաբերությունը, կտնտեսեն ժամանակը: Առկա մարտահրավերների պայմաններում ՏԲՀ-ն առավել փորձում է է'լ ավելի խրախուսել սպառողներին՝ առաջարկելով թվային սպասարկումներ եւ հեռավորության վրա, առանց մասնաճյուղեր այցելելու ցանկացած բանկային գործողության իրականացում: Կոմիսիոն վճարման չեղարկումը այս ռազմավարության բաղադրիչն է,- հայտարարեց ՏԲՀ-ի բանկի գլխավոր տնօրենի տեղակալ Նիկա Քուրդիանին:

ՏԲՀ-ի արագ փոխանցման տերմինալներում հաստատված նոր կարգից կարելի է արդեն օգտվել հուլիսի 1-ից:

ՀԱՅՏՆԻ ԴԱՐՁԱՆ ՏԲՀ-Ի ԱՊԼԻԿԱՑԻԱՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ



Արդեն հայտնի են ՏԲՀ-ի ապլիկացիաների մրցույթի երեք հաղթող թիմերը: Ժյուրիի որոշմամբ՝ եզրափակիչին մասնակից 11 թիմերից հաղթող են ճանաչվել.

* I տեղը՝ Inventors՝ սպառողներին առաջարկում է ավտոմեքենաների պահեստամասերով ապահովում, պահեստամասերի վաճառքի վայրի, գնի հայտնաբերում, պահեստամասի մատակարարում եւ էլեկտրոնային տրանսզակցիա,

* II Payze՝ էլեկտրոնային կոմերցիոն հարթությունում արդի եւ գործուն վճարումների հարթակ է,

* III Typline՝ հերթի կառավարման միավորային համակարգ, որն ընկերություններին հնարավորություն է ընձեռում սպառողների հերթագրումը օնլայն կարգով: Սպառողները բջջային ապլիկացիայով տեղեկանում են, թե քանի մարդ է հերթագրված, հերթագրվում են եւ ներկայանում են այն ժամանակ, երբ հաստատվում է սպասարկման ժամկետը:

Ժյուրիի անդամները լավագույն թիմերը հայտնաբերեցին՝ ելնելով հետեւյալ չափորոշիչներից՝ որքանո՞վ է ապլիկացիան կարգավորում գործարարների համար իրատեսական հիմնախնդիրները, ինչպիսի՞ն է ապլիկացիայի հիմնադրույթը եւ բիզնես մոդելը: Հաղթող թիմերին կհանձնվեն դրամական պարգեւներ, եւ դրանք լիարժեք կօգտագործվեն ապլիկացիաների լիարժեքության եւ վերջնական մշակման համար: I տեղը պարգեւատրվում է 30 000, II եւ III տեղերը՝ 15 000 լարիով:

Ապլիկացիաների մրցույթը ՏԲՀ-ի «Ստարթափ» նախագծի թիմը սկսեց երկու տարի առաջ: Նախագծի նպատակը՝ մի կողմից նպաստել գործարարներին մարդկային եւ ժամանակի ռեսուրսի օգտագործմանը, մյուս կողմից՝ այն ուղղված է նոր ստարթափների հայտնաբերման խրախուսմանը:

Նախագիծը իրականացվում էր երեք փուլով եւ, դրա շրջանակներում, նախագծի մասնակիցները ներկայացնելու էին այնպիսի ծրագրեր, որոնք կդյուրացնեին գործարարների համար առօրյա գործունեությունը եւ կնպաստեին գործարքների ավտոմատացմանը:

ՏԲՀ-ի ապլիկացիաների մրցույթի աջակիցներն էին FMO-ն եւ GITA-ն:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԵՆԹԱԴՐԵՆՔ, ՎԱՐԱԿՄԱՆ 20 ՀԱԶԱՐ ԴԵՊՔԸ ԻՄ ՍԽԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է, ԻՍԿ Ո՞ՒՄ ՍԽԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ 10 ՄԻԼԻՈՆ ԴԵՊՔԸ»

Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված սուր իրավիճակի կապակցությամբ, երկրի կառավարության պատասխանատվության մասին խոսելիս, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հիշեցրեց, որ ողջ աշխարհում գրեթե 215 երկրներում հաստատվել է կորոնավիրուսով վարակման 10 միլիոնից ավելի դեպք:

«Ենթադրենք, վարակման 20 հազար դեպքը իմ սխալի արդյունքն էր, իսկ ո՞ւմ սխալի արդյունքն է աշխարհում 10 միլիոն դեպքը»,- հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

Խոսելով երկրում մահացության ցուցանիշի ավելացման մասին, Հայաստանի վարչապետը ասաց «Ընթացիկ տարվա հունիսին, մահացությունը, նախորդ տարվա հունիսի համեմատությամբ, ավելացել է շուրջ 30 տոկոսով: Բնականաբար, դա միայն կորոնավիրուսի հետեւանքը չէ, թեպետ մահացության ցուցանիշի ավելացումը, ինչ խոսք, մեծապես պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի հետեւանքով երկրում ստեղծված իրավիճակով»:

ԱՌՆՎԱԶՆ ԵՐԵՔ ՀԱԿԱՀԱՄԱՀԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆ ՊԱՀՊԱՆԵԼԸ ՊԵՏՔ է ԼԻՆԻ ԱՌՕՐՅԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը պարետատան նիստից հետո անցկացված ճեպասուլիսում հայտարարեց, որ յուրաքանչյուր քաղաքացի կարող է նվազեցնել կորոնավիրոսային հիվանդության հետեւանքով մահվան վիճակագրությունը՝ ինքը չվարակվելով եւ ուրիշին չվարակելով:

Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ դրա համար անհրաժեշտ է պահպանել հակահամաճարակային կանոնները:

- Ցավոք, դեռեւս չի հաջողվում լուծել կորոնավիրուսային համաճարակի համատեքստում մեր հիմնական ռազմավարական խնդիրը, իսկ մեր հիմնական ռազմավարական խնդիրն է՝ կորոնավիրուսին զուգահեռ, ապրել սովորելը,- ասաց Հայաստանի վարչապետը եւ հավելեց, որ այս խնդիրը դեռ չի հաջողվում լուծել, այդ պատճառով ամենօրյա ռեժիմով շարունակվում է կորոնավիրուսով վարակման նոր դեպքեր արձանագրվել:

- Իհարկե, քաղաքացիների մեծ մասը, բարեբախտաբար, առողջանում է, բավականին մեծ մասը հիվանդությունը տանում է առանց որեւէ ախտանշանի, բայց մեզնից յուրաքանչյուրը պետք է հասկանա, որ ինքն այս թվի մեջ դրական վիճակագրությունը լրացնելով, ինչ-որ մեկին դատապարտում է մահվան,- ասաց կառավարության ղեկավարը:

Վարչապետի խոսքով՝ արտակարգ դրության իրավական ռեժիմի կանոնները խախտելու փաստերով հունիսի 30-ին տուգանվել է 2697 քաղաքացի, որից 2166-ը՝ դիմակներ չկրելու համար:

- Առնվազն 3 հակահամաճարակային կանոնները պահպանելը պետք է լինի մեր ամենօրյա պարտականությունը: Այդ կանոններն են՝ կրել դիմակ, պահպանել սոցիալական հեռավորություն եւ պարբերաբար ախտահանել ձեռքերը,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ՉՈՒՆԻ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ստեֆան Վիսկոնտին (Ֆրանսիա) եւ Էնդրյու Շոֆերը (ԱՄՆ) հունիսի 29-30-ը առանձին եւ համատեղ տեսակոնֆերանս են անցկացրել Հայաստանի արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանի եւ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ՝ քննարկելու տարածաշրջանում հանրային առողջապահության իրավիճակը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներկայիս դինամիկան եւ խաղաղ կարգավորման գործընթացում իրականացվելիք հաջորդ քայլերը: Քննարկմանը մասնակցել է նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը:

Հուլիսի 1-ին ԵԱՀԿ կայքում տարածվեց Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հետ անցկացված տեսակոնֆերանսին վերաբերող հաղորդագրություն, որտեղ նշված է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական լուծում չունի: Համանախագահները կոչ են արել կողմերին հավելյալ քայլեր ձեռնարկել՝ հրադադարի ամրապնդման եւ բնակչությանը խաղաղության նախապատրաստելու համար: Համանախագահներն ընդգծել են նաեւ՝ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի հովանու ներքո մոնիտորինգային գործողությունները վերսկսելու անհրաժեշտությունը՝ որքան հնարավոր է շուտ, երբ որ պայմանները դա թույլ տան:

Համանախագահները եւ արտգործնախարարները պայմանավորվել են եւս մեկ համատեղ տեսակոնֆերանս անցկացնել հուլիսին եւ անձնապես հանդիպել՝ որքան հնարավոր է շուտ:

300 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ՝ «ՏԱՇԻՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ

«Տաշիր» բարեգործական հիմնադրամը 300 հազար դոլարին համարժեք դրամ է նվիրաբերել «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ Հայաստանի շտապ բժշկական օգնության ծառայության 1786 բժիշկներին, բուժքույրերին, բուժակներին, սանիտարներին, կարգավարներին ու վարորդներին միանվագ ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով:

Նշենք, որ դեռ ապրիլին «Տաշիր» հիմնադրամը եւս 100.000 ԱՄՆ դոլար էր փոխանցել «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Միջոցների մի մասն ուղղվեց կորոնավիրուսի հաղթահարմանն ուղղված միջոցառումներին:

Նշենք, որ մարտի 18-ից սկիզբ առած համահայկական «COVID-19 Հայաստան. միասին հաղթահարենք համաճարակը» դրամահավաք-արշավն իրականացվում է Հայաստանի նախագահի, ԱՀ նախագահի, սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակի, ՀՀ առողջապահության նախարարության եւ ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

Ընդհանուր առմամբ, արդեն հավաքագրվել է 770.000 ԱՄՆ դոլար:

Համահայկական այս կարեւոր շարունակական ձեռնարկին կարող եք միանալ հետեւյալ հղմամբ՝ www.himnadram.org»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

Հունիսի 30-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովայի հետ, ով ավարտում է առաքելությունը:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը բարձր գնահատեց Նատալյա Վուտովայի եւ ԵԽ հետ համագործակցությունը՝ նշելով, որ Եվրոպայի խորհուրդը Հայաստանի կարեւորագույն գործընկերներից է ժողովրդավարության հետեւողական զարգացման եւ ամրապնդման գործում:

Զրուցակիցներն անդրադարձան Հայաստանի ժողովրդավարական օրակարգին, դատաիրավական ոլորտի բարեփոխումներին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Հայաստանը հուլիսի 1-ին ընտրվել է «Հավասարության սերունդ» ֆորումի շրջանակներում յեւավորված «Տեխնոլոգիաներ եւ նորարարություն» կոալիցիայի առաջնորդ երկիր:

«Հավասարության սերունդ» ֆորումը գործում է ՄԱԿ-ի հովանու ներքո Գենդերային հավասարության եւ կանանց առաջխաղացման մարմնի (UN-Women), ինչպես նաեւ՝ քաղաքացիական հասարակության հետ սերտ համագործակցությամբ:

Ֆորումը կառուցված է 6 թեմատիկ դաշինքների շուրջ, որոնք միտված են գենդերային հավասարության եւ կանանց իրավունքների կենսագործմանը եւ խթանմանը՝ տնտեսական հզորացման, առողջապահության, կլիմայի, ինչպես նաեւ՝ գենդերային բռնության կանխարգելման, ֆեմինիստական շարժումների եւ առաջնորդության ոլորտներում:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՈՎ 34-ՐԴԸ՝ 180 ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Heritage Foundation-ի հրապարակած «Տնտեսական ազատության ինդեքսով» Հայաստանը մեկ տարվա ընթացքում բարելավել է իր դիրքերը 13 կետով՝ 180 երկրի շարքում զբաղեցնելով 34-րդ հորիզոնականը:

Ինչպես նշեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանը «համեմատաբար ազատ» տնտեսություն ունեցող երկրից դարձել է «հիմնականում ազատ»: Հայաստանն այս ցուցանիշով առաջատար է ԵԱՏՄ երկրների շարքում, բացի այդ, երկրի ընդհանուր միավորը գերազանցում է տարածաշրջանային եւ համաշխարհային միջին ցուցանիշները:

ԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ԿԱՅՔԸ

Հայաստանի ազգային գրադարանը նոր դիզայնով կայք է ստեղծել, որն արդեն գործարկվել է: Այն եռալեզու է՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն: nla.am կայքում ընդգրկված է նաեւ «Նորություններ» բաժինը, որում տեղ կգտնեն գրական, գրադարանային կյանքին վերաբերող տարատեսակ նյութեր:

Կայքում կներկայացվի նաեւ ամեն ամսվա ամենաընթերցված գրքերի տասնյակը:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ է «ՔԱՅԼ ԴԵՊԻ ՏՈՒՆ» ԱՌՑԱՆՑ ԾՐԱԳԻՐԸ

Կորոնավիրուսային համավարակը չի ընդհատել Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կապն ու աշխատանքը սփյուռքի երիտասարդության ու պատանիների հետ:

Սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի նախաձեռնությամբ՝ սփյուռքի պատանիների եւ երեխաների «Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական ծրագիրն այս ամառ կանցկացվի հետաքրքիր առցանց ձեւաչափով:

Ծրագիրը կընթանա օգոստոսի 3-28-ը եւ կիրականացվի 2 փուլով՝ ներառելով հայոց լեզվի եւ պատմաճանաչողության դասընթացներ, վիրտուալ այցեր համայնքներ (Հայաստանում եւ սփյուռքում), ինտերակտիվ քննարկումներ, բանավեճի ակումբ, առցանց կրթական խաղեր, հանդիպումներ մշակույթի եւ արվեստի գործիչների, նախորդ տարվա մասնակիցների հետ, աշխատարաններ եւ համայնքային նախագծեր:

Հետաքրքիր եւ ակտիվ ծրագրի շնորհիվ՝ սփյուռքահայ պատանիներին եւ երիտասարդներին հնարավորություն կտրվի ծանոթանալ Հայաստանի պատմությանն ու մշակույթին, սովորել մայրենի լեզուն եւ հայաստանցի երիտասարդների հետ շփման միջոցով ճանաչել իրենց հայրենիքը: Վիրտուալ այցերով մասնակիցները կլինեն Տաթեւից մինչեւ Ամբերդ, Սաղմոսավանքից Մատենադարան ու Էրեբունի թանգարան:

Առցանց ծրագրին կարող են մասնակցել 12-18 տարեկան սփյուռքահայ պատանիներն ու երիտասարդները: Մասնակցության հայտ ներկայացնելու վերջնաժամկետն է հուլիսի 20-ը: Հայտադիմումը լրացնելու համար, պետք է այցելել հետեւյալ հղմամբ՝ https://forms.gle/nKMJGuxMucp28nMHA:

Ծրագրի մասին տեսանյութը կարող եք դիտել, տարածել եւ ներբեռնել հետեւյալ հասցեից՝ https://cutt.ly/ri21rAZ»:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒԼԻՍ

5.07.2020 Տոն՝ Սուրբ Աստվածածնի տուփի գյուտի

6.07.2020 Սուրբ Կալիստրատոսի եւ 49 վկաների եւ Ղունկիանոս քահանայի հիշատակության օր

7.07.2020 Հիշատակ Զաքարիա մարգարեի

9.07.2020 Եղիսե մարգարեի հիշատակության օր

11.07.2020 Քրիստոսի 12 առաքյալների եւ Սուրբ Պողոս 13-րդ առաքյալի հիշատակության օր

Հիսուս Քրիստոսի ընտրած 12 առաքյալները Քրիստոսի աշակերտներն ու Քրիստոսի վարդապետության առաջին տարածողներն էին, հարուցյալ Քրիստոսի վկաները:

Հայ Առաքելական եկեղեցին 12 առաքյալների եւ 13-րդ առաքյալ ճանաչված Պողոս առաքյալի հիշատակը նշում է միասնաբար՝ Վարդավառից մեկ շաբաթ առաջ, Վարդավառի Բարեկենդանին նախորդող շաբաթ օրը: Հայ եկեղեցու տոնացույցում կան նաեւ առաքյալների հիշատակության առանձին տոներ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ՀԻՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԿԵՐԿԱՐԱՁԳՎԻ



Վրաստանի ներքին գործերի նախարարությունը խորհրդարանին ներկայացրեց փոփոխությունների փաթեթը, որը նախատեսում է մեքենաների հին համարանիշերի փոխարինման ժամկետի երկարաձգում:

Ինչպես նշվում է նախագծում, ՆԳ նախարարության կողմից սահմանված դեպքերից բացի, ավտոմեքենայի, կցորդի, գյուղատնտեսական մեքենայի, հատուկ ինքնագնաց մեքենաների եւ մոտոցիկլների հին համարանիշերի իրավական ուժը կպահպանվի մինչեւ 2021 թվականի մարտի 31-ը: Գործող օրենքով՝ այս ժամկետը ավարտվում էր 2020 թվականի սեպտեմբերի 1-ին:

Ժամկետի երկարաձգման պատճառը կորոնավիրուսի տարածման կանխարգելումն է. Վրաստանում 539 739 միավոր մեքենա հին համարանիշերով է գրանցված, որի արդյունքում, մինչեւ սեպտեմբերի 1-ը, հնարավոր է բազմամարդ կուտակումներ լինեն ծառայությունների կենտրոններում:

ԳԱՍՏՐՈՏՈՒՐԻԶՄ

ԹԲԻԼԻՍԻՆ՝ «Dolice Network» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՆԴԱՄ

Թբիլիսիի քաղաքապետարանի տարածած հաղորդագրության համաձայն՝ Վրաստանի մայրաքաղաքը դարձել է աշխարհի քաղաքների սննդի եւ գաստրոնոմիայի «Dolice Network» մասնագիտական ցանցի անդամ:

Քաղաքապետարանի տեղեկատվությամբ՝ «Dolice Network» ցանցը նպաստում է տարբեր քաղաքների գաստրոնոմիական տուրիզմի զարգացմանը: «Dolice Network»-ը միավորում է այնպիսի քաղաքներ, որոնց համար խորտկագիտությունը եւ գաստրոտուրիզմը էկոնոմիկայի զարգացան եւ տուրիստական գրավչության կարեւոր ուղղությունն է:

«Ցանցի նպատակն է, միջազգային եւ տեղի նախագծեր իրականացնելով, քաղաքներին օգնել՝ ձեւավորել խորտկագիտական ապրանքանիշ: Բացի այդ, նպաստել ուրբանական էկոնոմիկայի զարգացմանը:

Ցանցի անդամ քաղաքները կարող են սեփական փորձով կիսվել, խորացնել գիտելիքը եւ հաստատել գործընկերային հարաբերություններ, ինչպես նաեւ իրականացնել համատեղ նախագծեր: Ցանցին անդամակցության շրջանակներում՝ Թբիլիսին հնարավորություն կունենա՝ գաստրոնոմիական տուրիզմի աջակցության համար, իրականացնել տարբեր նախագծեր»,- ասվում է «Dolice Network»-ի պաշտոնական հայտարարության մեջ:

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ ԿՀԱՆԴԻՊԵՆ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ C2 ԽՄԲԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի եւ Հայաստանի ֆուտբոլի հավաքականները, Ազգերի լիգայի մրցաշարում, հանդես են գալու C2 խմբի շրջանակներում: Նրանց մրցակիցներն են Հյուսիսային Մակեդոնիայի, Էստոնիայի հավաքականները: Նշենք, որ այս հավաքականների առաջին հանդիպումը կանցկացվի Երեւանում, հոկտեմբերի 11-ին: Պատասխան հանդիպումը՝ Թբիլիսիում, նոյեմբերի 15-ին: Ինչ վերաբերում է մյուս հանդիպումներին, ապա Վրաստանի թիմը, խմբի շրջանակներում, առաջին հանդիպումը կանցկացնի Տալլինում, սեպտեմբերի 5-ին, իսկ Հայաստանի հավաքականը նույն օրը կհյուրընկալվի Հյուսիսային Մակեդոնիայում:

Մրցաշարի նախապատրաստման շրջանակներում՝ Հայաստանի հավաքականը հոկտեմբերի 7-ին Երեւանում ընկերական հանդիպում կանցկացնի Ալբանիայի հավաքականի հետ: Այս երկու հավաքականները 5 անգամ հանդիպել են, մի հանդիպումը ավարտվել է Հայաստանի թիմի հաղթանակով, մյուսը՝ ոչ-ոքի, մնացած երեք հանդիպումները շահել են ալբանացիները:

ՈՒԵՖԱ-Ն ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ՁԵՎԱՉԱՓԸ

Ֆուտբոլի եվրոպական ասոցացիան՝ ՈՒԵՖԱ-ն, հաստատեց Մունդիալ-2022-ի որակավորման փուլի ձեւաչափը, որը նաեւ պետք է հաստատի ՖԻՖԱ-ն: Աշխարհի առաջնության եվրոպական գոտու որակավորման փուլը կունենա 10 խումբ, որոնցից 5-ում ընդգրկված կլինեն 6 ընտրանի, իսկ 5-ում՝ 5 հավաքականներ:

Խմբերում առաջին տեղը զբաղեցրած թիմերն իրավունք կստանան մասնակցելու աշխարհի առաջնությանը, իսկ երկրորդ տեղը գրաված հավաքականները, Ազգերի լիգայի որակավորման փուլը հաղթահարած 3 թիմերի հետ, կվիճարկեն մյուս ուղեգրերը:

Մունդիալ-2022 նախատեսված է անցկացնել Քաթարում՝ նոյեմբերի 21-ից դեկտեմբերի 18-ը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 4.Նահանգ Իսպանիայում: 8.Քաղաք Կիլիկիայում: 9.Սպայական կոչում: 11.Ատամի հենակը: 12.Որեւէ առարկա ճեղքելու միջոց: 15.Գրական ստեղծագործություն: 17.Մեծածավալ արձակ գործ: 19.Հայկական ամսանուն: 20.Ռուս երգչուհի ... Դոլինա: 21.Թուրմ պատրաստել: 25.Միջնադարի բանաստեղծ, աշուղ, նկարիչ ... Հովնաթան: 26.Հացաբույսի խուրձ: 28.Իգական սեռի ներկայացուցիչ: 29.Բեմի պարագա: 30.Հայկական համր ֆիլմ: 33.Բովանդակություն, միտք: 34.Գյուղացու հին ոտնաման: 35.Վեհ, վսեմ: 37.Չորրորդ ձայնանիշը: 39.Ջեկ Լոնդոնի ստեղծագործություններից՝ «Մարտին ...»: 41.Սիրո, գեղեցկության աստվածուհին հունական դիցաբանության մեջ: 45.Եզդիների տեսակ: 48.Իղձ, մեծ ցանկություն: 50.Ցուցական դերանուն: 51.Հոգնակիակերտ մասնիկ: 52. Ա.Բակունցի ստեղծագործություններից «... ռուսաց թագավորին»: 55.Վարած, ակոսած, բայց չցանված հող: 57.Ասիական պետություն: 58.Մարմնի մաս, վերջույթ: 60.Մարկոս ... Ալիմյան: 61.Գավառ Արեւմտյան Հայաստանում: 62.Հատապտղի տեսակ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Չմշակված ադամանդը: 2.Հայկական մշակութային քաղաք Արցախում: 3.Փշոտ բույս: 4.Գրիգոր Զոհրապի ֆրանսիական գրական կեղծանունը՝ ... Լեար: 5.Ժխտական նախածանց: 6.Տաղանդաշատ դերասանուհի ... Մնացականյան: 7.Հնդկացիների մայր գետը: 10.«Անխոս ու ..., մենակ կերթաս ի՞նչ ասեմ» (Գուսան Հավասի): 13.Շք..., քայլ...: 14.Ամերիկյան պետություն: 15.Հայկական գինու տեսակ: 16.Մունիցիպալիտետ եւ քաղաք Վրաստանում: 17.«Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան, Ծաղիկ փնջելու, ... հանելու» (Հովհ.Թումանյան): 18.Կոմիտասի մշակումներից: 22.Սարի, լեռան ստորոտից գագաթն ընկած տարածքը: 23.Կոլտնտեսականի աշխատավարձը: 24.Խոջիվանքում թաղված մեծ աշուղ: 27.Մաշտոցյան այբուբենի տառ: 28.Հռոմեական պետական, քաղաքական եւ ռազմական գործիչ, զորավար Հուլիոս ...: 31.Տարի, ամյակ: 32.Հայ մեծ պատմավիպասան: 35....նացան, ...ացու: 36.Հայերենի վերջածանց: 38.Հովհաննես Շիրազի բանաստեղծ որդին: 40.Երկարության չափման միավոր: 42.Ավ.Իսահակյանի երգի վերածված բանաստեղծություններից՝ «... ախպեր»: 43.Ցանկություն «... Աստված»: 44.Աստվածաշնչյան գետ: 46.Տարտու քաղաքը հնում: 47.Հայաստանի Շիրակի մարզի Ջաջուռ գյուղում ծնված հայ որմնանկարիչ ... Ավետիսյան: 49.Փակ, ոչ բաց: 53.Մսամթերք: 54.Արական սեռի ներկայացուցիչ: 56.Շան կեր: 59.Մաշտոցյան այբուբենի վերջին գիվնորը:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Նջամենա: 7.Քենակալ: 9.Կոկտեյլ: 10.Ոգեշունչ: 13.Ոպեներ: 16.Տարա: 18.Նինա: 20.Ամեոբա: 23.Ալվան: 25.Մուգ: 27.Դարան: 28.Կեմենի: 29.Տկլոր: 31.Գեշ: 32.Կուտի: 35.Վոլոստ: 36.Լուրթ: 37.Ոսկի: 38.Համ: 41.Ազոխ: 43.Մակետ: 46.Բնիկ: 47.Ֆուձիյամա: 48.Ամիր: 49.Տիպիկ: 50.Թան: 51.Լիզ: 52.Սաստ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Անկապ: 3.Եղեռն: 4.Աքլոր: 5.Անգետ: 6.Շլաչ: 8.Կյուրի: 9.Կարկանդակ: 11.Շանթ: 12.Նան: 14.Ենո: 15.Եռալ: 17.Իսակով: 19.Արգիշտի: 21.Եփրատ: 22.Բանտ: 24.Ներողամիտ: 25.Մեգով: 26.Ունես: 30.Կարտոֆիլ: 33.Ուբսունուբ: 34.Իլիական: 39.Մայիս: 40.Դեմիս: 42.Խուրի: 44.Կապա: 45.Տակտ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445